# Մրցույթին մասնակցելու Հրավեր

**Վարկ - №: 8388 - AM (Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագիր, Լրացուցիչ ֆինանսավորում)**
**Վարկ - 8495 - AM (Էլեկտրահաղորդման ցանցի Բարելավման ծրագիր)**
**IFB №: HV-W-ESRAF-1/2015**

1. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից ստացել է վարկ **Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագիր Լրացուցիչ ֆինանսավորում և Էլեկտրահաղորդման ցանցի Բարելավման ծրագրերի** համար: Նախատեսված է, որ այս վարկի միջոցների մասը տրամադրվելու է հետևյալ պայմանագրերի (Լոտերի) կամ նրանց համադրության վճարման համար՝

Լոտ 1. Հաղթանակ 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում
Լոտ 2. Չարենցավան-3 110/10 կՎ ենթակայանի վերակառուցում
Լոտ 3. Վանաձոր-1 110/10 կՎ ենթակայանի վերակառուցում
Լոտ 4. Աշնակ 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում

2. Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ այժմ ընդունում է փակ կնքված հայտեր իրավասու հայտատուներից հետևյալ ենթակայանների լիակատար կառուցման (վերակառուցման) համար՝

Լոտ 1. Հաղթանակ 220/110/10 կՎ ենթակայան
Լոտ 2. Չարենցավան-3 110/10 կՎ ենթակայան
Լոտ 3. Վանաձոր-1 110/10 կՎ ենթակայան
Լոտ 4. Աշնակ 220/110/10 կՎ ենթակայան

3. Հետաքրքրված համապատասխան հայտատուները հետագայում կարող են լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ ստանալ Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ-ից աշխատանքային օրերին՝ ստորև նշված հասցեով տեղական ժամանակով ժամը $9^{00}$-ից մինչև $17^{30}$:
Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ
Զորավար Անդրանիկի փող.1 Երևան 0084, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. + 374 10 72 00 10

4. Հայտատուն պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշները յուրաքանչյուր լոտի համար ՝

Լոտ 1- Հաղթանակ 220 կՎ ենթակայանի վերակառուցում

**Ընդհանուր Փորձառություն** - Ենթակայանների վերազինման, վերակառուցման, կառուցման պայմանագրերի իրականացման փորձ որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ մինչև դիմումների ներկայացման վերջնաժամկետն առնվազն վերջին հինգ [5] տարիների ընթացքում և ամեն տարի առնվազն ինն (9) ամիս գործունեությամբ:

**Հատուկ Փորձառություն** - Նմանատիպ չափի և բնույթի պայմանագրեր վերջին ութ (8) տարիների ընթացքում առնվազն երկու (2) ենթակայանների կառուցման պայմանագրերում (220 կՎ լարումով կամ ավելի բարձր և առնվազն 3 բջջով՝ ներառյալ 1 տրանսֆորմատորի բջջով ենթակայան) մասնակցություն որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր

կապալառու՝ յուրաքանչյուրն առնվազն 12,0 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը հաջողությամբ և նշանակալիորեն ավարտվել է:

Կապալառուն պետք է ունենա առաջարկված Պայմանագրին համապատասխան հետևյալ փորձառությունները՝

- 220 կՎ ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում

- 110 կՎ ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում

- Միջին լարման ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում:

**Պատմական Ֆինանսական գործունեություն** - Ստուգված հաշվապահական հաշվեկշռի ներկայացում կամ եթե չի պահանջվում Հայտատուի երկրի օրենքներով՝ Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին հինգ [5] տարիների կտրվածքով՝ ցուցադրելու Հայտատուի ֆինանսական դրության ներկա հիմնավորվածությունը և նրա երկարաժամկետ շահութաբերության հեռանկարները:

**Միջին տարեկան շրջանառություն** - Նվազագույն միջին տարեկան 22,0 մլն. ԱՄՆ դոլար շրջանառությունը՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարիների հիմնականում ավարտված (պայմանագրի 80%-ից ավել իրացված մինչև մրցույթի բացումը) ենթակայանի կառուցման / վերակառուցման պայմանագրերի համար ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ:

**Ֆինանսական ռեսուրսներ** - Հայտատուն պետք է ցույց տա, որ իր համար հասանելի են կամ առկա են ֆինանսական ռեսուրսներ, ինչպիսիք են իրացվելի ակտիվներ, չծախսվող իրական ակտիվներ, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ, տարբերվող ցանկացած պայմանագրային կանխավճարներից՝ հետևյալ դրամական հոսքերի պահանջներին համապատասխան:

(i) **3,75 մլն ԱՄՆ դոլար որպես դրամական հոսքերի պահանջ**

(ii) **ընդհանուր դրամական միջոցների հոսքերի պահանջները այս պայմանագրի համար և դրա ընթացիկ պարտավորությունները:**

**Լոտ 2- Չարենցավան-3 110 կՎ ենթակայանի վերակառուցում**

**Ընդհանուր Փորձառություն** - Ենթակայանների վերազինման, վերակառուցման, կառուցման պայմանագրերի փորձ որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ մինչև դիմումների ներկայացման վերջնաժամկետը առնվազն վերջին հինգ [5] տարիների ընթացքում և ամեն տարի առնվազն ինն (9) ամիս գործունեությամբ:

**Հատուկ Փորձառություն** - Նմանատիպ չափի և բնույթի պայմանագրեր վերջին ութ (8) տարիների ընթացքում առնվազն երկու (2) ենթակայանների կառուցման պայմանագրերում (110 կՎ լարումով կամ ավելի բարձր և առնվազն 3 բջջով՝ ներառյալ 1 տրանսֆորմատորի բջջով ենթակայան) մասնակցություն որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ յուրաքանչյուրը առնվազն 9,0 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը հաջողությամբ և նշանակալիորեն ավարտվել է:

Կապալառուն պետք է ունենա առաջարկված Պայմանագրին համապատասխան հետևյալ փորձառությունները՝

- 110 կՎ ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում

- Միջին լարման ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում:

**Պատմական Ֆինանսական գործունեություն** - Ստուգված հաշվապահական հաշվեկշռի ներկայացում, կամ եթե չի պահանջվում Հայտատուի երկրի օրենքներով՝ Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին հինգ [5]

տարիների կտրվածքով՝ ցուցադրելու Հայտատուի ֆինանսական դրության ներկա հիմնավորվածությունը և նրա երկարաժամկետ շահութաբերության հեռանկարները:

**Միջին տարեկան շրջանառություն** - Նվազագույն միջին տարեկան 15,0 մլն. ԱՄՆ դոլար շրջանառությունը՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարիների հիմնականում ավարտված (պայմանագրի 80%-ից ավել իրացված մինչև մրցույթի բացումը) ենթակայանի կառուցման / վերակառուցման պայմանագրերի համար ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ:

**Ֆինանսական ռեսուրսներ** - Հայտատուն պետք է ցույց տա, որ իր համար հասանելի են կամ առկա են ֆինանսական ռեսուրսներ, ինչպիսիք են իրացվելի ակտիվներ, չծախսվող իրական ակտիվներ, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ, տարբերվող ցանկացած պայմանագրային կանխավճարներից՝ հետևյալ դրամական հոսքերի պահանջներին համապատասխան՝

(i) **2,5 մլն ԱՄՆ դոլար որպես դրամական հոսքերի պահանջ**

(ii) **ընդհանուր դրամական միջոցների հոսքերի պահանջները այս պայմանագրի համար և դրա ընթացիկ պարտավորությունները**

**Լոտ 3- Վանաձոր-1 110 կՎ ենթակայանի վերակառուցում**

**Ընդհանուր Փորձառություն** - Ենթակայանների վերազինման, վերակառուցման, կառուցման պայմանագրերի փորձ որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ մինչև դիմումների ներկայացման վերջնաժամկետը առնվազն վերջին հինգ [5] տարիների ընթացքում և ամեն տարի առնվազն ինն (9) ամիս գործունեությամբ:

**Հատուկ Փորձառություն** - Նմանատիպ չափի և բնույթի պայմանագրեր վերջին ութ (8) տարիների ընթացքում առնվազն երկու (2) ենթակայանների կառուցման պայմանագրերում (110 կՎ լարումով կամ ավելի բարձր և առնվազն 3 բջջով՝ ներառյալ 1 տրանսֆորմատորի բջջով ենթակայան) մասնակցություն որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ յուրաքանչյուրն առնվազն 7,0 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը հաջողությամբ և նշանակալիորեն ավարտվել է:

Կապալառուն պետք է ունենա առաջարկված Պայմանագրին համապատասխան հետևյալ փորձառությունները՝

- 110 կՎ ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում

- Միջին լարման ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում:

**Պատմական Ֆինանսական գործունեություն** - Ստուգված հաշվապահական հաշվեկշռի ներկայացում, կամ եթե չի պահանջվում Հայտատուի երկրի օրենքներով՝ Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին հինգ [5] տարիների կտրվածքով՝ ցուցադրելու Հայտատուի ֆինանսական դրության ներկա հիմնավորվածությունը և նրա երկարաժամկետ շահութաբերության հեռանկարները:

**Միջին տարեկան շրջանառություն** - Նվազագույն միջին տարեկան 12,0 մլն. ԱՄՆ դոլար շրջանառությունը՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարիների հիմնականում ավարտված (պայմանագրի 80%-ից ավել իրացված մինչև մրցույթի բացումը) ենթակայանի կառուցման / վերակառուցման պայմանագրերի համար ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ:

**Ֆինանսական ռեսուրսներ** - Հայտատուն պետք է ցույց տա, որ իր համար հասանելի են կամ առկա են ֆինանսական ռեսուրսներ, ինչպիսիք են իրացվելի ակտիվների, չծախսվող իրական ակտիվներ, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ, տարբերվող

ցանկացած պայմանագրային կանխավճարներից՝ հետևյալ դրամական հոսքերի պահանջներին համապատասխան

(i) **2,0 մլն ԱՄՆ դոլար որպես դրամական հոսքերի պահանջ**

(ii) **ընդհանուր դրամական միջոցների հոսքերի պահանջները այս պայմանագրի համար և դրա ընթացիկ պարտավորությունները**

**Լոտ 4 - Աշնակ 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում**

**Ընդհանուր Փորձառություն** - ենթակայանների վերազինման, վերակառուցման, կառուցման պայմանագրերի փորձ որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ մինչև դիմումների ներկայացման վերջնաժամկետը առնվազն վերջին հինգ [5] տարիների ընթացքում և ամեն տարի առնվազն ինն (9) ամիս գործունեությամբ:

**Հատուկ Փորձառություն** - Նմանատիպ չափի և բնույթի պայմանագրեր վերջին ութ (8) տարիների ընթացքում առնվազն երկու (2) ենթակայանների կառուցման պայմանագրերում (220 կՎ լարումով կամ ավելի բարձր և առնվազն 3 բջջով՝ ներառյալ 1 տրանսֆորմատորի բջջով ենթակայան) մասնակցություն որպես կապալառու, ենթակապալառու կամ գլխավոր կապալառու՝ յուրաքանչյուրն առնվազն 11,0 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը հաջողությամբ և նշանակալիորեն ավարտվել է:

Կապալառուն պետք է ունենա առաջարկված Պայմանագրին համապատասխան հետևյալ փորձառությունները՝

-220 կՎ ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում

-110 կՎ ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում

- Միջին լարման ենթակայանի նախագծում, կառուցում, տեղակայում և մեկնարկում:

**Պատմական Ֆինանսական գործունեություն** - Ստուգված հաշվապահական հաշվեկշռի ներկայացում կամ եթե չի պահանջվում Հայտատուի երկրի օրենքներով՝ Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին հինգ [5] տարիների կտրվածքով՝ ցուցադրելու Հայտատուի ֆինանսական դրության ներկա հիմնավորվածությունը և նրա երկարաժամկետ շահութաբերության հեռանկարները:

**Միջին տարեկան շրջանառություն** - Նվազագույն միջին տարեկան 20,0 մլն. ԱՄՆ դոլար շրջանառությունը՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարիների հիմնականում ավարտված (պայմանագրի 80%-ից ավել իրացված մինչև մրցույթի բացումը) ենթակայանի կառուցման / վերակառուցման պայմանագրերի համար ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ:

**Ֆինանսական ռեսուրսներ** - Հայտատուն պետք է ցույց տա, որ իր համար հասանելի են կամ առկա են ֆինանսական ռեսուրսներ, ինչպիսիք են՝ իրացվելի ակտիվները, չծախսվող իրական ակտիվները, վարկային գծերը և այլ ֆինանսական միջոցներ, տարբերվող ցանկացած պայմանագրային կանխավճարներից՝ հետևյալ դրամական հոսքերի պահանջներին համապատասխան՝

(i) **3,5 մլն ԱՄՆ դոլար որպես դրամական հոսքերի պահանջ**

(ii) **ընդհանուր դրամական միջոցների հոսքերի պահանջներն այս պայմանագրի համար և դրա ընթացիկ պարտավորությունները**

5. Մեկից ավել լոտերի շնորհման դեպքում՝

- Պահանջվող հատուկ փորձառությունը պետք է կուտակի առանձին լոտերի համար պահանջվող հատուկ փորձառությունները:

- Պահանջվող կանխիկ գումարների հոսքերը պետք է կուտակեն առանձին լոտերի համար պահանջվող կանխիկ գումարների հոսքերը:
- Պահանջվող տարեկան շրջանառությունը պետք է կուտակի առանձին լոտերի համար պահանջվող տարեկան շրջանառությունը:

6. Հայտատուն պետք է կցի իրավաբանորեն հաստատված գրավոր ցուցմունք, որ չկա սահմանված կամ հայտարարված սնանկացման գործընթաց իր ընկերության ակտիվների դեմ և որ ընկերության լուծարման գործընթաց չի ընթանում:
Հայտատուն պետք է ունենա ISO 9001 և ISO 14000 կամ համարժեք սերտիֆիկատ, որակի ապահովման համակարգի և շրջակա միջավայրի ապահովման հավաստիացում:
Գները պետք է լրացվեն չջնջվող թանաքով և ցանկացած անհրաժեշտ փոփոխություն, կապված սխալների և այլնի հետ, պետք է նախապես տեղյակ պահվի մրցույթի մասնակցի կողմից:

7. Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է գնվել հետաքրքրված հայտատուների կողմից՝ Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ-ի անունով գրավոր դիմում ներկայացնելու (որով խնդրվում է տրամադրել վերը նշված փաթեթը) և ստորև նշված հաշվին չվերադարձվող տուրք՝ 900 (ինը հարյուր ԱՄՆ դոլար) գումարի չափով վճարելու դեպքում: Այդ փաստաթուղթը կուղարկվի էքսպրես օդային փոստով կամ կհանձնվի հայտատուի լիազորված ներկայացուցչին՝ չվերադարձվող վճարի վճարման մասին բանկային փաստաթղթերի ստանալուց անմիջապես հետո:

<u>Հաշիվներ վճարման համար</u>

Հայաստանի ոչ ռեզիդենտների համար (վճարում ԱՄՆ դոլարով):

Շահառու՝ Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ
Հաշվեհամար № 1150001172630101
Շահառուի բանկը՝ ՀայԲիզնեսԲանկ
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
SWITFT CODE: ARMNAM 22
Միջնորդ բանկ՝ DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS NEW YORK, ԱՄՆ
Հաշվի համար 04454448
SWIFT CODE: BKTRUS33

<u>Հայաստանի ռեզիդենտների համար (վճարում ՀՀ դրամով)՝</u>

Շահառու՝ Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ
Հաշվեհամար՝ № 2470139122970010
Շահառուի բանկը՝
Արդշինինվեստբանկ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
SWITFT CODE: ASHBAM 22

8. «Ցուցումներ Հայտատուներին» և «Պայմանագրի Ընդհանուր Պայմաններ»-ի դրույթները Բանկի «Կառույցի նախագծման, մատակարարման և տեղակայման գնում», ստանդարտ մրցութային փաստաթղթի (հրապարակված 2008թ.-ի ապրիլին, վերանայված 2015թ. ապրիլին) դրույթներն են: Միջազգային մրցակցային մրցույթը կանցկացվի Համաշխարհային Բանկի մեկ փուլով ընթացող Մրցույթի գործընթացի համաձայն:

9. Նախամրցութային հանդիպումը տեղի կունենա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գրասենյակում 2015թ.-ի հոկտեմբերի 27-ին, տեղական ժամանակով ժամը $11^{00}$-ին:

10. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև 2015թ.-ի նոյեմբերի 17-ը, տեղական ժամանակով ժամը $11^{00}$-ին և պետք է ուղեկցվեն Մրցույթին մասնակցելու երաշխիքով ըստ հետևյալի՝

Լոտ 1՝ Հաղթանակ 220 կՎ ԵԿ-ի վերակառուցում

Լոտ 1-ի Մրցույթի մասնակցության երաշխիքի գումարը պետք է լինի չորս հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլար (450 000 ԱՄՆ դոլար):

Լոտ 2՝ Չարենցավան - 3 110 կՎ ԵԿ-ի վերակառուցում

Լոտ 2-ի Մրցույթի մասնակցության երաշխիքի գումարը պետք է լինի երկու հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլար (250 000 ԱՄՆ դոլար):

Լոտ 3՝ Վանաձոր - 1 110 կՎ ԵԿ-ի վերակառուցում

Լոտ 3-ի Մրցույթի մասնակցության երաշխիքի գումարը պետք է լինի երկու հարյուր հազար ԱՄՆ դոլար (200 000 ԱՄՆ դոլար)

Լոտ 4՝ Աշնակ 220 կՎ ԵԿ-ի վերակառուցում

Լոտ 4-ի Մրցույթի մասնակցության երաշխիքի գումարը պետք է լինի չորս հարյուր հազար ԱՄՆ դոլար (400 000 ԱՄՆ դոլար)

Ուշ ներկայացված հայտերը կմերժվեն

11. Հայտերը կբացվեն 2015թ.-ի նոյեմբերի 17-ին, տեղական ժամանակով ժամը $11^{15}$ -ին վերը նշված գրասենյակում, այն Հայտատուի ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել:

12. Վերը նշված գործընթացի վերաբերյալ ամբողջ հաղորդակցությունը պետք է փոխանցվի հետևյալ հասցեին՝

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**
**Գլխավոր տնօրեն՝ պրն. Արամ Անանյան**
**Հայաստանի Հանրապետություն,**
**Երևան 0084**
**Զորավար Անդրանիկի փողոց 1**
**Հեռ.՝ +37410 72-00-10**
**Ֆաքս՝ +37410 72-01-21**
**E.mail: hvenprojects@gmail.com**

13. Մրցույթի Հրավերը նաև հրապարակվելու է Հայաստանի Գնումների կայքում հետևյալ հասցեով՝ www.procurement.am

14. Հայտի պատրաստման գործընթացը արագացնելու նպատակով, Մրցութային փաստաթղթերը գնած Հայտատուներին կտրամադրվեն նաև էլեկտրոնային տարբերակով՝ PDF ֆորմատով և Տեխնիկական աղյուսակները (որոնք պետք է լրացվեն Հայտատուի կողմից)՝ MS Word ձևաչափով :